

կողմերը կը նշանակէ Հատեան մեծ քանդակ մ'արձանագրութեամբ (անդ՝ Պտկ. 5) արդի Հերիտ գաւառին մէջ, Արբելա-Ռոմանոզով ճամբու վրայ, մեծ դեղի մը դիմացը, Բատաս անուն՝ որ շինուած է Ասորեստանեան մեծ «թէլլ»-ի մը վրայ, քանդակուած բարձր ժայռի մը վրայ (Պտկ. 6) : Լէման կը յիշէ Սոլիմոսի (c. 38, 1) խօսքը որ «Կիլիկիան» — յիշատակ մը Հատաց մեծ պետութեան — կ'երկարածդէ նաեւ մինչեւ Մարաստան. Լէման կ'իմանայ զայս յիշատակ մը Հատեանց զաղթականութեանց մինչեւ այս կողմերը, տարբեր խնդիր՝ կամաւ թէ բնադատեալ այն շրջանին, երբ տակնուվրայ եղած էին այս ամէն աշխարհները, եւ երբ փոխարէն Սիլիթական զաղթականութիւն մը կը յիշուի Գամբաց մէջ (Յուստինոս, Բ., 4), եւ երբ Մատիանայիք, նախ Ուրմիոյ լճին ափունքը բնակող ժողովուրդ մը տարածուած ըլլալու էր մինչեւ Ադիւս գետ, ուր գիտէ զերեւնք տակաւին նաեւ Հերոզոտոս, եւ անոր համար նոյն իսկ Թ. Ռայնախ կրնար ասոնց վերադրել Բողադքէօյի եւ Հատեան յիշատակարանները եւ Հոմմէլ այս յիշատակարանաց ստեղծողաց եւ Սիլիթացուց մէջ կապ մը մտածել (հմտ. Փր. Հոմմէլ, «Հատք եւ Սիլիթացիք եւ Երանեանց Պատմութեան մէջ առաջին անգամ երեւան գալը», Պրակ 1898, գերմ. եւ այլուր) : Թողունք որ այս տեսութիւնը հաւանական չէին՝ նոյն իսկ Հ. Վինկլէրի պեղումներէն (1906ին) յտառ, անկէ ետքը տարակոյս չի մնար թէ հոն էր Հատեանց մեծ պետութեան մայրաքաղաքը (իրը ԺԵ. դար Ե. Ք.) : Չիարդ եւ իցէ՛ Լէման մտադիր կ'ընէ կէտ մը՝ հատեան արձանագրութեան խորշի մէջ քանդակուած է՝ Ուրարտեանց արձանագրութեան խորշերու նախորինակաց նման, մինչդեռ բուն Հատեանց քանդակները, ի Գամիբու եւ շրջակայ աշխարհները տարբեր ստիպ են, եւ ասկէ կը հետեցրնէ թէ այս արձանագրութիւնը քանդակողներն երկար տակն ապրած պիտի ըլլան այն կողմերը՝ որոնք մինչեւ այն տակն Սարգեան կամ Ուրարտեան էին : Արձանագրութիւնը Լէման կը դնէ ժամանակէ մը՝ երբ այս ամէն կողմանք Մարաց աշխարհին մաս եղած էին : Մեզի համար կարեւորը միակ կէտ մըն էր այս ամէնէն հետեցրնելու եւ ապացուցանելու համար, այն թէ այս բազմաթիւ եւ յաճախ իրարու հակասական տեսութեանց, բարձրմանց, հաւանա-

կանութեանց եւ լուկ կարելիութեանց մէջ Հայոց նախապատմական դիրքը կրնայ ներկայացուիլ չափազանց ալ տարբեր կերպարանքներով, եւ թէ ի վերջոյ հայ լեզուի մէջ տեսնուած՝ եթէ կ'ուզուի նաեւ զանազան խաւերն՝ եւ ազդեցութիւնքն, — որոնք չեն պակասած պատմական շրջանին ալ, — նոյնպէս հայ ազգին «փոքրասիական» թէ «սուսերական-այսրոտեան» թէ «նախկապագովկեան» կամ պարզ «հայկերպ» մարմնակազմը, — կրնան մեկնուիլ թէ՛ շատ խոր հնութեան շրջաններէն՝ դարձեալ պէսպէս, եւ թէ նոյն իսկ անագանագոյն՝ Կիմմերեանց նախնութեանց եւ հետեւորդ շրջաններէն, ըլլայ Հայոց տարեբաց գաղութը կանխագոյն թէ նոյն շրջանին, արեւելքէ թէ արեւմուտքէ, մաս մաս թէ միահամուռ, կամ այլապէս : Իրերն այնպէս են որ՝ օրինակի համար՝ Վ. Բէլլը կրնար պէսպէս տեսութիւնքն իրարու խառնելով սա պատկերը դնել՝ բնականադէս ի նիթաղրութեամբք. այսինքն՝ Հայք թէ՛ Թրակացի էին եւ Փոնտացուց ազգակից (Կրէմերեան եւն տեսութիւն) եւ թէ՛ Փոնտիկացի յետոյ անցան Գամիբու եւ տարածուեցան հին ընդարձակ Կիլիկիան՝ եւ թողուցին այն «Հատեան» յիշատակարանքը (Ենտեանեան տեսութիւն), անկէ ստեղծան Տիգրիսի դաշտակողմանքը (Ամիդ եւն՝ ճիշդ Հատեանց համար ալ, յետոյ «Արմէնեանց» ալ) եւ ասկէ զէպ ի հիւսիս եւ հիւսիս-արեւելք շարժելով՝ յետո մղեցին Սարգեանց (Ուրարտեանց) ժողովուրդը եւ տիրեցին Տոսալ-Վանայ, այնպէս որ Ուրարտեանք ստիպուեցան փոխուիլ Երասխայ հովիտը եւ տիրել այն կողմանց՝ ամբողջ զինով Արմաւիր (ճիշդ է Տոսալայ արքայից ուշ տիրելն Երասխայ հովին, յետոյ Ալարտեանք քաջուած են հոն՝ եթէ ոչ աւելի հիւսիս. իսկ Արմաւիր մայրաքաղաք՝ հայկական աւանդութեան համեմատ) : Բայց երբ Հայք Արմաւիրն ալ առին Երասխան անցած՝ Ալարտեանք արեւելակողմէն մտնելով, Սարգեան-Ուրարտեանք ստիպուած էին յետո նահանջել՝ Երասխա գետն ի վեր մինչեւ Կարնոյ աշխարհը, որ տակաւին յետոյ ալ «Սաղատիք» էր (ճիշդ է՝ Սաղատեանց երկար տակն այս կողմերը բռնելը) : Թէ եղած է այսպէս՝ այս ուրիշ խնդիր է, եւ իբր ամբողջութիւնը՝ այս եւ նման կարծեաց համար (հմտ. Բէլլ, ի Տեղեկագիրս Բերլինի Մարդախ. Ընկ., 1900, էջ 63) կրնար Հիւրման անհիմն ըսել

(«Հին տեղ.» եւն, էջ 10) : Սակայն այլեւայլ մասերը քիչ շատ այնպէս եղած ըլլալու են կամ կրնան ըլլալ : Ուստի լաւագոյն է տեսնել այժմ թէ գոնէ Ուրարտեանց եւ Ասորեստանեաց բեւեռագիրք ի՛նչ կ'ըսեն Եփրատի ափանց մասին «Կիմմերեանց» շարժումէն յառաջ :

(Շարունակելի) :

ՌԵՏՈՐՆԵԸՑ ԳԵՒԵՐԻ ՎԵՆՔԵՐԸ

(Շարունակութիւն) :

22. ՆԿԱՐ ԿԱՄ ՆԿԱՐԵՆԱՅ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

Նկար կամ Նկարենայ ⁴¹ Ս. Ստեփանոսի վանքը կը գտնուի Շախուռայ սուրբ Աստուածածնի հարաւային արեւմուտքը, Վանայ ծովի եզերքը, բարձր լեռան մը կողքին : Տաճարը, որ նուիրուած է Ս. Յարութեան եւ սուրբ Ստեփանոսի, անշուք է, իսկ միւս շէնքերը քարուքանդ (Բիւզանդիոն, 1902, Թ. 1905. հմտ. նաեւ Հայրենիք, 1887, Թ. 2257 եւ Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 39) : Եղած է անուանի մենաստան եւ ժ.Չ. դարուն ունեցած է մինչեւ 200 անգամ կամ միաբան : Ասկէ է անուանին Գէորդ Վ. Նկարենցի (Անդ) :

Բարեբաւորէն բաւական յիշատակագրութիւններ կան վանքին մասին : Գանձարանի մը յիշատակարանին մէջ կը կարդանք՝ «Գրեցաւ (1401ին) յերկիրս Ռչաունեաց եւ ի հրեշտակարնակ յարգիս, որ կոչի Նկար ընդ հովանեաւ սրբութեանս եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Ստեփաննոսին ի հայրապետութեան Տեառն Գաւթի... եւ ի տեղապահութեան սուրբ ուխտիս իմաստուն եւ հեղահոգի տէր Յովհաննէսի, որ կամակիր եղեւ զրկուց սորա մարմնաւոր պիտոյիք եւ այլ ամենայն սպասաւորութեամբ եւ կան բնակեալ յայտ անապատիս բազում կրօնաւորք, այլ եւ զմեծ հոնտորն զԳրիգոր վարդապետն զուսուցիչն մեր...» (Նոտարք, էջ 14. ուր ծն. 1 կը գրուի՝ «Մեծ ի դիւզն Հին առ ծովեզերք ի հիւսիսային արեւմտեան ծայրն Ռչաունեաց

⁴¹ Նկարէն ըսել է խոտուակի, նախուն. հմտ. Հանդէս Ամս., 1907, էջ 55 : — Նկարէնի հետ կը նոյնացան Անձ զնապատ եւ Գիւարայն Ս. Յարութիւն. հմտ. անդ, ուր եւ տեսնել Ստեփանոս Նկարենայ կաթ. :

գաւառին ի մէջ անտառախիտ լեռին Տաւայ պոյնի կոչեցելոյ») : Նոյն Յովհաննէսի մասին էջմիածնի 1520 ձառքնարի յիշատակարանին մէջ կայ՝ «Մանաւանդ տէր Յոհաննիսի Նկարենայ եպիսկոպոսին եւ ստացողաց զրոցս Ստեփաննոսի եւ Թումայի եւ քեր նոյնին Շնոֆորին եւ ծնողաց նոցին Մկրտիչին եւ Գրիգորին՝ Բեռի արեղին եւ հարեղբաւրն Չաքարին եւ Աւետիսին՝ քարախ կոկողին եւ ծնողաց նորին... Մանաւանդ զստացողք լուսադարգ զրոցս զհարազատ եղբարքն եւ զկուսակրան քահանայքն զՍտեփաննոս եւ զԹումա եւ զծնողան իւրեանց զՄկրտիչ եւ զՄինայ : Նայեւ զարհիական զլուսն ստաշնորդ սուրբ ուխտին Յարութեան Նկարենայ գոէր Յոհաննէս եպիսկոպոս, որ է հարեղբաւրորդի ստացողաց սորա, զի է տեսուչ եւ ինամոզ եւ հայր բոս հոգւոյ որոցս եւ այրեաց» (Հ. Ն. Ակիւնեան, Հաւաքումն յիշատակարանաց) :

Մաշտոցի մը յիշատակարանին մէջ, գրուած 1461ին, վանքին ստաշնորդ կը յիշուի Մխիթար. «Եւ արդ ես Սաշատուր Շատանցիս ետու զձագրել զսուրբ զիրքս որ կոչի Մաշտոց... եւ ետու զսա ընծայ եւ նուէր ի սուրբ եւ ի հոգեակուր ուխտն ի դունն Նկարենայ սուրբ Յարութեան, յառաջնորդութեան տէր Մխիթար սրբազան եպիսկոպոսին ի վայելումն հրեշտակակրօն սուրբ կրօնաւորացն եւ մեր հոգեւոր որդոցն. Գաւթիկեց Ստեփանոս կրօնաւորին, Արրահամ մահգասուն եւ Մէլքէսէթ սրբանեալ կրօնաւորին, զի նախախնամութեամբ եւ սրտացաւարար պահեցն զսուրբ զիրքս... եւ արդ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսուրբ Մաշթոցս ի դրանէ Նկարենայ սուրբ Յարութեան ոչ յեպիսկոպոսաց, եւ ոչ ի հէրպէտաց, ոչ ի կարգաւորաց եւ ոչ յաշխարհականաց» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաքումն Յիշատակարանաց) :

Ասկէ յտառ 1448ին Հայրապետ արեղան աւետարան մը կ'ընծայարեղէ «Նկարենայ սուրբ Յարութեան եւ սուրբ Աստուածածնին հրեշտակարնակ մենաստանին» (Նոտարք, էջ 160) :

Նկարենայ վանքի մէջ 1552ին կը գրուի աւետարան մը սա յիշատակարանով՝ «Եւ արդ ես յետինս ի զրչաց... սուտանուն արեղայս Մկրտիչ կրանաւոր... կատարեցինք զսա մեղսամած մատամբ իմով... : Գրեցաւ սա յերկիրն Ըռուչաունայ ի սուրբ ուխտս ծո-

վահայեացի ի դրունս սուրբ Ստեփաննոսի ի հայրապետութեան Տեան Գրիգորիսի, ի թուականիս մերում ի ՌԱ (1552): ... Ընդ նոսին եւ մեզ ողորմեացի զանարժան զրիչս զԱրսէն սուտանուն արեղա եւ զՄկրտիչ գործադրող սուրբ աւետարանիս...: Աստուած օրհնէ զԱզունս տանուորէք առ հասարակ...: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմիարանս ուխտիս Նկարենայ եւ զԴաւիթ եպիսկոպոսն եւ Ներսէս եպիսկոպոսն եւ զՄելքիսէթ կրաւնաւորն, զՍտեփաննոս կրաւնաւորն, զՄկրտիչ կրաւնաւորն, զՄկրտիչ հէրպէան, զԿարապետ կրաւնաւորն, զՍեդրակոս կրաւնաւոր, զՅովհաննէս կրաւնաւորն, զՍահակ կր., զԴաւիթ կր., զԳրիգոր եպիս. զԹումայ կր. եւ զՅովաննէս կր. եւ փոքր Յովաննէսն: Գրեցաւ սուրբ աւետարանս ի յաջակողն զեղջին Ազունայ ի սուրբ ուխտս ծովահայեաց սուրբ Ստեփաննոս» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վաստ., էջ 654—656):

Իսկ 1584ին կը գրուի Գանձարան մը՝ «յերկիրս Ռշտունեաց ի հրեշտակարանակ յարկիս, որ կոչի Նկար ընդ հովանեաւ սուրբ Սուրբ Ստեփաննոսի: Յիշեցէք զուսուցիչն մեր զԳրիգոր վարդապետ, որ զՏաւաղկան սկսաւ զրել... կազմեցաւ զիրքս ձեռամբ Պետրոս եպիսկոպոսի ի թվ. ՌԼԳ» (Հ. Ն. Ակինեան, Հաւաքունն Յիշատակարանայ Հ. Պոտուրեանէն. յիշատակարանս «Նօտարք»ի մէջ՝ էջ 14 հրատարակուած յիշատակարանը կը յիշեցնէ):

Նկարենայ վանքի մէջ 1615ին կը գրուի Ձեռնագրութեան գիրք մը (Հ. Ն. Ակինեան, Հաւաքունն Յիշատակարանայ Հ. Պոտուրեանէ եւ Փիրգայեմեանէ):

Յառաջ բերուած յիշատակարանները կը վկայեն թէ Նկարենայ վանքը ունեցած է ծաղկուն շրջան եւ իր առաջնորդներէն անուանի եղած են՝ Յովհաննէս, Մխիթար եւ Դաւիթ եպիսկոպոսները: Դժբախտաբար՝ «սոյժմ աւերակ է սոյն երբեմն պայծառ եւ բազմամարդ մենաստանն» (Նօտարք, էջ 14, ծն. 4) եւ իր հոգերը գրաւած են Յազուն զիւղի բնակիչները (Բիւզանդիոն, 1902, թ. 1905): Ենթակայ էր Աղթամարի (Անդ):

23. ՇԱՆՈՒՌԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ՍԳԱՆՁԵԼԱԳՐՈՒ ՎԱՆՔԸ

Վանայ ծովի եզերքը, Կեցան գաւառակի մէջ, Կանձարս գիւղի քով, Սմայան հայաբնակ գիւղին մէջ, Աղթամարէն բաւական հեռու՝

անտառուտ եւ բարձր լեռան մը կողքին շինուած է Շախուռայ կամ Շախորայ Ս. Աստուածածին վանքը: Ունի հաճոյական տեսարան եւ կէս մը կղմնտորով ու կէս մը քարով շինուած զմբեթաւոր եկեղեցի մը, այժմ զրեթէ աւերակ: Կոչուած է նաեւ Աքանչեւաղործ⁴², վասն զի Յիսուսի լուացուած եւ սքանչելիք գործող տաշտին մէկ մասն այ հոս է (միւս մասը Արծկէի Աքանչեւաղործ վանքի մէջ):

24. ՈՒՐԱՆԷ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ, ՆԵՐՈՍԻ Ս. ԹՈՒՄԱՍ ԵՒ ՍՄԲԱՏԱՇԵՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ահա երեք վանքեր Կարճկանի, որոնք 1895ին Գոմոց Ս. Գէորգ, Կենդրոնից եւ Սորբայ Ս. Կարապետի վանքերուն հետ Տաճիկներէն եւ Քիւրաբէն կը կողոպտուին (Արարատ, 1896, էջ 88): Ուրանէ կամ Ուրանց Ս. Աստուածածնի մասին տեսնել ապա Նիղոսի վանքերը: — Ներսիս Ս. Թոմաս ըլլալու է զուցէ Մըրսի Ս. Թովմաս:

25. ՉԱԳԱՐ Ս. ՆՇԱՆԻ ԿԱՄ ՉԱՐԱՆԱՆ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ

Չաղար Ս. Նշան կամ Վարդ Պատրիկի վանք եւ կամ վանք Ս. Աստուածածնի կը գտնուի՝ «ի կողաց Արտոս լեռին, գեղեցկագիր եւ բարձրահայեաց ի վերայ ձորաբերանոյն Ոստանայ⁴³» (Սարգիսեան Հ. Ն., Տեղագրութիւնը, էջ 255):

Վանքը բազկացած է եկեղեցիէ, որ Ս. Նշան կը կոչուի, մատուէ եւ միարաններու եւ ուխտաւորներու (տասը) սենեակներէ: Եկեղեցին շինուած է անտաշ եւ տաշուած քարերով: Արտաքուտ շատ պարզ է: Ներսը երկու քառանկիւնի ամբողջական եւ վեց նմանօրինակ կիսասիւններու վրայ կը

⁴² Հմմտ. Բնաշխ. Բառարան, էջ 39 բ. Բիւզանդիոն, 1902, թ. 1905. Արեւելք, 1901, թ. 4806. Հայրենիք, 1887, թ. 2257): — Նահապետեանի տողերու ամփոփումն է՝ Կը գտնուի Վանայ ծովու արեւելեան հարաւային կողմը, լեռնային ամուր գիւղքով մը Յին եւ Ազուն գիւղերէն մէկ ժամ եւ Շատուանէն 4 ժամ հեռավորութեամբ շինուած է այս վանքը: Իւր շէնքը ճարտարապետական նախնական ժամանակի հրաշալիքաւ կը համարուի: Ունի բնորոշակ հոգային կալուածներ Շատուան գիւղի մէջ, անմարդաբնակ (Հայրենիք, 1887, թ. 2257):

⁴³ «Ոստանայ լեռը զիմաց ժամ մը հեռավորութեամբ Արտոս լեռան քղանցքի տակ կառուցուած է Չարահան կամ Չաղար Ս. Նշանի վանք. հոս կը ննջէ Աւարայրի սոխակն աղու Եղիշէ» (Նահապետեանի Արեւելք, 1887, թ. 979. Հմմտ. եւ Բաֆֆի, Կայծեր, Բ., էջ 450. Հմմտ. նաեւ Նօտարք, էջ 81):

բոլորուին պայտածեւ կամարները կրելով իրենց վրայ զմբէթը՝ կոնաձեւ կաթուղիկէով: Եկեղեցին լուսաւորուած է տասը պատուհաններով: Արեւմտեան կողմը կայ դուռ մը, որուն վերեւ կայ այս արձանագրութիւնը. «Շինեցաւ⁴⁴ տաճարս այս յաջողութեամբ Աստուծոյ (ի) հայրապետութեան Աղթամարայ Թումայ կաթուղիկոսին Ջուլամերկու պարոն Արղլա խան բէկ Ոստանայ պարոն Բայրամ բէկ, առաջնորդ անարժան տէր Վարդան թվ. ՌՄԺ (1761): Իսկ աջակողմեան սիւնին վրայ արձանագրուած է՝

«Ի հայկազան մեծ թվականին,
Հաղար երկհարիւր եւ ժ ընդ նմին,
Եղեւ շինումն⁴⁴ տաճարին
Ձեռամբ Տէր Վարդանին
Հօրն Սահակին եւ եղբաւրն Յոհաննին»:
(Աղղր. Հանդ., 1911, էջ 46):

Մատուը թաղակապ եւ փոքրիկ շէնք մըն է եւ կղած եկեղեցոյ հիւսիսային պատին: Այս մատուոն հարաւային պատին կից ամփոփուած են Եղիշէ մատենագրին թանկագին մատուցները, իսկ հիւսիսային պատին կից կը գտնուի Նիկողայոս եպիսկոպոսի մարմինը: Եղիշէի գերեզմանը մինչեւ 1889 թուականներուն զաթէն դուրս եկեղեցոյ մէկ պատին տակ կը գտնուէր, բայց թաշատուր կաթուղիկոսի հրամանով ներս տանուեցաւ եւ Գարեգին Սրուանձտեանց կտակեց գումար մը ընտիր շէրիմ մը եւ մարմարեայ զմբէթ մը կերտելու համար⁴⁵ (Շէրենց, Սրբավայրեր, էջ 111):

Գիւտ քճ. Աղայեանց կը գրէ՝ «Դիւան, ժ., էջ 548). «Պատրիկի վանքի զարդասի մօտ պատի մէջ քարի վրայ այս արձանագրութիւնը կայ՝ Շինեցաւ ՅԿՁ (917) թուականութեան հայոց, արդեօք եկեղեցոյ շինութեան համար թէ՛ կից որ եւ է ուրիշ շինուած քի համար յայտնի չէ: Յայտնի չէ նոյնպէս թէ Ինչ էր վանքի սկզբնական անունը: Վանքի երկրորդ նորոգութիւնից առաջ, որ

⁴⁴ Շինեցաւ կամ շինումն եղեւ հասկնալու է վերաշինուեցաւ կամ նորոգուեցաւ:

⁴⁵ Սարգիսեան կ'աւանդէ թէ՛ Եղիշէի նշխարներու ամփոփումը այս վանքի մէջ 40 տարի յառաջ տեղի ունեցած է. անկէ յառաջ անոնք Վասիշտաի մէջ էին (Տեղագրութիւնը, էջ 255. Նօտարք, էջ 70, 89): Իսկ մատուոն մէջ, որուն անունն է Ս. Գէորգ, գտնուեց կ'ամփոփէ Պաշտուր կաթուղիկոս: Սրուանձտեանց 30 տակ կը կտակէ շէրիմը կանգնելու համար (Արեւելք, 1901, թ. 4746. Հմմտ. նաեւ Միրախորեան, Ուղեւորութիւն, Ա., էջ 115):

եղաւ ՌճԺԸ (1669) թուին, առում են որ ընդարձակ արձանագրութիւն է եղել տաճարի որմերի վրայ, բայց նորոգութեան ժամանակ, ինչպէս այդ անխիղճ սովորութիւնը կայ, վերացուել է, որով տաճարի շինողի անունը մնացել է անյայտ:

Այդ նորոգութիւնից յառաջ էլ վանքը Ռշտունեաց հոգակաւոր վանքերից մէկն է եղած, ուր եւ հանդուցին Հայոց անզուգական պատմադիր Ամատունեաց Եղիշէի եպիսկոպոսի նշխարները: Վանքը Եղիշէի մարմինն այն տեղ ամփոփելուց յետոյ անուանուեց սուրբ Եղիշէի վանք, իսկ յետոյ երբ վերստին նորոգեց այն Վարդ պատրիկ իշխանը, նրա անունով կոչուեց Պատրիկ վանք: Այժմ արդէն կոչուած է Չարահան կամ տաճիկերէն Չաղար սուրբ Նշան, որովհետեւ զի պուածով մի այլազգի դիւանար բժշկուել է այնտեղ եւ այնուհետեւ միշտ տանում են այնտեղ դիւանարուած հիւանդներին եւ կապում մեր պատմադիր սուրբ Եղիշէի մօտ գտնուող սիւնից շղթայով»:

Ինչպէս Ազունեանի խօսքերէն կը տեսնուի վանքս շատ անուն ունեցած է:

- 1. Ս. Աստուածածնի եւ Ս. Գէորգի վանք:
- 2. Չարահան սուրբ Նշան⁴⁶ իրրեւ չարերէն հանող ու փրկող, իսկ պարզապէս Ս. Նշան կոչուած Եղիշէի լանջախաչէն կամ աւոր ունեցած Ս. Սաշի կամ Ս. Նշանի մատուցներ:
- 3. Չաղար Ս. Նշան, իրրեւ Նշան մը, որուն օգնութիւնը սէտք է կանչել: Ջոջ մը կ'այստահարի. բարեկամները խորհուրդ կու տան՝ «Չաղար Ս. Նշան» (Կանչէ Ս. Նշանը): Ջոջը յուսալով կը կանչէ եւ կը բուժուի: Չաղար աղաւաղուելով կ'ըլլայ Չաղար (Արեւելք, 1903, թ. 5424):
- 4. Դերա Շրբարան — իրրեւ Շիրբան գիւղի վանք:
- 5. Վարդ-Պատրիկայ վանք — իրրեւ Վարդ պատրիկի վանք կամ անկէ շինուած. «Պատրիկայ վանքից գոր շինեալ է Վարդ-Պատրիկ իշխանն Արծրունի, որդի Թէղոսրոս Ռշտունույ մեծի»⁴⁷ (Նօտարք, ծն. 6, էջ 88):

⁴⁶ Վանքին կանգակին համեմատ Ս. Սկրիստոս Ս. Գրիգորի, սա Ս. Արիստակէսի, սա Ս. Ներսէսի կը յանձնէ Հեղինէի Պաշտպանի մէկ մատուցը, որ ետքէն Եղիշէի կը արուի Արահան խոստովանողէն (Աղղր. Հանդ., 1916, էջ 206—207):

⁴⁷ Կամ՝ աւելի ճիշդ գուցէ անոր շրջանին Ս. Նշանի երեւնալուն եւ սոյդ առթիւ վերաշինուած ըլլալուն. հմմտ. Թովմ. Արծր., էջ 255 եւ Հայապատում, էջ 230—231: — Tübingenի Hauptkatalogի մէջ (տպ.

6. Եղիշէի վանք, որովհետեւ հոս ամփոփուած են Ս. Եղիշէի խնկելի մասունքները (Միրախորեան, Ուղեւորութեան, Ա., էջ 115):

Վանքիս հիմնարկուն անձանօթ է: Աւանդութիւնը անոր երկրորդ հիմնադիրը կը ճանչնայ Վարդ պատրիկ, սակայն դարերով երկար ան կը մնայ անձանօթ եւ կամ առանց յիշատակուելի կարեւոր դործի մը: Ծատ հետաքրքրական է որ դարպասի պատին վրայ գտնուած «ՅԿԶ» թուականէն (համտ. վերը Աղանեանցի խօսքերը) կայ արձանագրութիւն մը, որ Աւետարանի մը մէջ պահուած է եւ կեղծիքի նշան ունի իր վրայ, ինչպէս Լաւրյեանց (համտ. վար) արդէն գիտել կու տայ: «ՅԿԶ թուականութեան Հայոց (917) եւ իշխան Վարդպատուրիկ Արծրունի թէ՛ վողորտեան ի յԱստուածոյ յաճողութեամբ շինեցի սուրբ վանքս սուրբ Գէորգ եւ սուրբ Աստուածածին մեր հայրենական ժառանգութենէ մեզ, յարաւելեան կողմանէ Սեղիկալայ բունից մինչեւ ինչ? Արտօսայ սարի գերեզմանի տակ ձգեց. բունից զայ մինչեւ մեր թաղի ձոր, զա յալո միջի տարուն? յառմէն բունէ մինչեւ զայ սէլի աղուր (?) սէլ աղուրից բունէ մինչեւ զայ Աղիալոց քուն: Իմ ամեն ըստացված վեց է. Չաղբր, Սուրբ Նշանայ, եւ Սուրբ Գէորգայ, Արտեր, Ոստեներ եւ Սար: Այսքան թարեղով: Եւ ով որ պակսէ եւ ով որ գրավէ. անէ՞ք Նոյ նախապետէ եւ հայր Արրահամէ անցէ. ամէն: (Նոյն աւետարանին մէջ նօտր գրով է գրուած եւ լեզուից էլ երեւում է որ վերջին դարում է շարադրուած» Լաւրյեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 318):

ԺԵ. գարուն վանքս կը սկսի ծաղկել եւ ժիր գործունէութիւն ունենալ: Նարեկի մը յիշատակարանին մէջ (գրուած 1401ին) կայ՝ «Եւ Յովանէս կրօնաւոր, Թումաս կրօնաւոր, Կիրակոս կրօնաւոր թափեցաք զսուրբ Նշանն Գեառարգել, բերաք ի սուրբ Եղիշէի ուխտն ի Վարդպատուի վանքն, առ երջանկաշնորհ կրօնաւոր առաջնորդն սուրբ վանից եւ եղաք յիշատակ սուրբ Գէորգայ եւ սուրբ Եղիշէին ի կործանման... Թամուրին ՊԾ թուին (1401) եւ սպասու կացաք մեք Աքանչելագործ սուրբ

անդ, 1907, էջ 133) կը կարգանք՝ «Այս է հանդիստ տապանի աստուածատէր Էջիանի վարդ պատրիկի, որ կայմեաց ի կենդանութեան իբրում մեծաշան աշխատողի Վարդի ի փրկութիւն հողաց իբրում եւ շէնեաց Ս. եկեղեցիս թաղաւորն Վարդ պատրիկ ի յանուն սրբոյն Ստեփաննոսի, զոր կարգեաց վարդապետն Աստմ ի թվին ՊԾԳ (1404) ի փառս Աստուծոյ մերոյ»:

Նշանին մինչ ի մահ» (Նօտարք, էջ 15—16): — Վարդան արեղան 1419—1420ին վանքիս աւետարան մը կը նուիրէ՝ «ետու զսա ընծայ եւ նըւէր ի մեծ եւ ի հռչակաւոր եւ յանուանի սուրբ ուխտս, որ Պատրիկ վանք յորջորջի, որ կայ հանդէպ Ոստան քաղաքի ի գուան գերամաքուր սուրբ Աստուածածինն եւ սրբոյն Գէորգեայ զաւրավարին» (Լաւրյեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 324—326): Սոյն յիշատակարանին մէջ կը մաղթուի յիշել Յովհաննէս բարունին եւ «զառաջնորդ սուրբ ուխտիս զՍտեփաննոս փրկիսովայ» եւ ուրիշ շատերը (համտ. անդ, էջ 324) եւ կը պահանջուի գիրքս վանքէն չհանել (անդ, էջ 326): Ծերուն 1422ին կը նուիրէ աւետարան մը եւ կրկին ու կրկին կը խնդրէ զայն վանքէն չտանիլ (Լաւրյեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 350—352): Քանի մը տարի վերջ վանքիս կը նուիրաւերուի 1428ին գրուած Աւետարան մը, որուն յիշատակարանին մէջ բաւական թուով վանականներու կամ միարաններու յիշատակութիւնը կ'ըլլայ:

Ահա բնագիրը՝ «Եւ մեղուցեալս յամենայնի Արրահամ սոսկ անուամբ կրօնաւորս ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց եւ ետու զսա ընծայ եւ նուէր ի մեծ եւ ի հռչակաւոր ուխտս Պատրիկ վանք կոչեցեալ որ կայ հանդէպ Ոստան քաղաքի ի գուան սուրբ Աստուածածինն եւ սուրբ Գէորգ զօրավարին: Յիշել ի Քրիստոս զապաստուրք սուրբ եկեղեցւոյս, որք վայելոյք են սուրբ աւետարանիս զքաջ եւ զարիւրան գորբազան եւ զուզղազաւան վարդապետն մեր զՅովհաննէս, եւ Աստուածատուր վարդապետն, զՄարտիրոս եւ զՅովանէս, զՅովակի եւ զԱստուածատուր, զՄկրտիչ եւ զՎարդան, զԿարապետ եւ զՍտեփաննոս, զՎարդան եւ զԱստմ միայնակեացս: Եւ արդ ես... անյիշելիս անուամբ միայն արեղայս Թումայ... յիշման արժանի առնել զիմ անարժանութիւնս եւ թողութիւն մեղաց խընդրել ի Քրիստոսէ... Գծաղբեցաւ եւ աւարտեցաւ սուրբ աւետարանս ի ՊՀԷ (1428) թուականին եւ ընծայեցաւ ի գուան Պատրիկայ վանից սուրբ Աստուածածինն եւ սուրբ Գէորգ զօրավարին» (Նօտարք, էջ 87—89. Աղանեան, Գիւան, Ժ., էջ 5):

Հերպետ 1499ին աւետարան մը կ'ազատէ եւ «Բերեալ ետ ի նոյն մեծափառ սուրբ ուխտն Պատրիկ վանք» (Լաւրյեանց, Յուց.

հայ. Չեռ. Վասպ., էջ 317—318): Սա այն Աւետարանն է որ 1419ին այս վանքին մէջ գրուած էր (համտ. վերը եւ Լաւրյեանց, անդ, էջ 317):

Պատրիկայ վանքի անուանի անձը կարելի է համարել Յովհաննէս Վրդ. Բրդութենց, զանձասացը, որուն մասին արդէն մանրամասնօրէն գրած է Հ. Ն. Ակինեան. համտ. Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 210—215: Ներսէս Բաղիշէցին Յովհաննէսի մասին կը գրէ (Հանդ. Ամս., 1937, էջ 211):

«Է նա բնական Վառնիշատցի ի Պատրիկայ մենաստանի, Որ է հանդէպ Ոստան քաղաքի, Մաւրն Լուսոյ Աստուածածինն Եւ Գէորգեա զօրավարի Եղիշէի զանրարանիս Երախտաւոր Հայոց ազգի»:

Ինքն Յովհաննէս այսպէս կ'արտայայտուի՝ (անդ, էջ 214). «Եւ Յովհաննէս վարդապետ յՈստանայ, որ սուրբ տառս ստացայ յիշատակ ինձ...: Գիրքս Յովհաննէս վարդապետին է յՈստանայ ի սուրբ Ուխտն Պատրիկայ որ հանդէպ քաղաքին Ոստանայ»:

Վերջին դարերուս վանահայրը Սարգիս քահանան⁴⁸ Պետրոս Պիւլպիւլ կաթողիկոսի մտերինն էր (համտ. Յովակի վանահայր Նարեկայ, Տեղեկաղբիւր աղետալի անցից եւ անկարգութեանց տանն Աղթամարայ, Կ. Պոլիս 1873, էջ 11): Իսկ Եղիշի Ծ. Վ. Ներկարարեան ջանացած է վանքս նորէն ծաղկեցնել (Արեւելք, 1903, թ. 5424, համտ. Ասպարէզ, 1939, թ. 1871):

Ս. Նշան ենթակայ էր Աղթամարի եւ հին ժամանակներէն սկսած նուիրատութիւններով բաւական հողերու եւ ինչքերու տիրացած (համտ. Լաւրյ. անց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 912. Շէրենց, Արրավայրեր, էջ 112. Արեւելք, 1887, թ. 979):

Վասպուրականի միւս վանքերու⁴⁹ նման ան ալ կողոպուտի ենթարկուած է: Իր տնակատարութիւնն եղած է Խաչի տօներուն (Արրավայրեր, էջ 112—113): Սիրուած եւ այցելուած ուխտավայր էր (Արեւելք, 1903, թ. 5424):

⁴⁸ Լաւրյեանցի տեղեկութիւններէն կ'ըլլայ, որ Վանքիս նկատմամբ տեսնել զեռ՝ Ինձիւնեան, Նոր Հայաստան, էջ 260, Սրուանձտեանց, Համով Հոտով, էջ 50—51, Հայրենիք, 1887, թ. 2262, Բազմավէպ, 1898, էջ 502—503, Արաբս, 1897, Բ. գիրք, Արեւելք, 1887, թ. 979, 1903, թ. 5424:

⁴⁹ Վանքիս նկատմամբ տեսնել զեռ՝ Ինձիւնեան, Նոր Հայաստան, էջ 260, Սրուանձտեանց, Համով Հոտով, էջ 50—51, Հայրենիք, 1887, թ. 2262, Բազմավէպ, 1898, էջ 502—503, Արաբս, 1897, Բ. գիրք, Արեւելք, 1887, թ. 979, 1903, թ. 5424:

26. ՊԵՏԸԼԻԿԻ ԿԱՍ ՊՈՒՏԼԻԿ ՎԱՆՔ

Վանայ ծովի եզերքի վանքերէն է Եւ վաղուց շարաթացած (Բիւլղանդիոն, 1900, թ. 1127), ստոյգ տեղն անձանօթ: Ասկէ էր նահատակն Թովմա վարդապետ. «Եւ յառաջ քան զայս երից եւ չորից ամաց վարդապետ մի Թումա անուն աշակերտ Սիմէօնի վարդապետին Որչտունեաց, զիտակ մանր ուսմանց, սիրող սրբութեան եւ աղօթից ի սուրբ ուխտն Պուտրիկ վանայ՝ նետիւ հարեալ սպանին» (Թ. Մեծոփ., էջ 44 եւ Հայոց Նոր վկաներ, էջ 263. համտ. Քարի վանք):

27. Ս. ՊՈՂՈՍԻ ՎԱՆՔԸ

Կարճիկան զաւառակի Քինարանց կամ աւելի ճիշդը Կենդրանց (կամ Գինդրանց) գիւղի վանքն է Ս. Պօղոս, որ անտերունչ վիճակի մասնուած էր (Հայրենիք, 1887, թ. 2231 եւ 2254) եւ գրեթէ աւերակի վերածուած (Արեւելք, 1901, թ. 4802, համտ. Եւ Բնաշխ. Բառարան, էջ 528):

28. ԶՈՋ ԳԼՈՒԽ ԵՒ ԳՈՄՔԻ Ս. ԳԷՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Ծանօթ են Գոմ կամ Գոմք անունով հայարնակ քանի մը գիւղեր, որոնք Հայաստանի գաւառներու մէջ ցրուած են: Այսպէս Աղձնեաց նահանգի կամ Սալնոյ ձորի (Բաղշէի շրջան) Ամրդղու վանքէն կէս ժամ հեռու կը գտնուի Գոմք գիւղը իր Ս. Աստուածածին վանքովը: Իսկ Տարուբերանի Երեւարք գաւառի (այժմեան Կարճիկանի) մէջ է ուրիշ Գոմք գիւղ մը, որմէ բաւական հեռու կառուցուած է Գոմաց կամ Գոմուց վանք եւ կամ Ջոջղուի Ս. Գէորգ. այսպէս կոչուած վանն զի աւանդութեան համեմատ հոս երկար պահուած է Ս. Գէորգի տիրական գլուխը. «Գոմաց վանք յանուանէ գեղջն այսպէս կոչեցեալ, որ ժամաւ հեռի է ի դաշտի եւ է անընդմիջաբար առ ամիս ծովուն՝ երկուստեք անրնակ գիւղօրէից եւ լեանն ի թիկանց իւր ունելով. ինքն ամայի թողեալ, թէպէտ եւ անկործան կայ... շինեալ է յանուն Ս. Գէորգայ, որոյ գլուխն պահէր անդ եւ այժմ առ անրնակ լինելոյ մենաստանին պահի ի Գոմս գեղջ: Առ շինականն յորչումն յայլոց Գոմաց վանք⁵⁰ ասացելոյ

⁵⁰ Գոմաց Ս. Գէորգ. Գոմս գիւղէն 2 ժամ հեռու գէպի հիւսիս Վանայ ծովի եզերքը շինուած գեղեցիկ վանք մը (Ղ. Նահապետեան, Հայրենիք, 1887, թ. 2254): «Ծովու անմիջական եղբը զաւարաւէտ թուփերով զար-

կոչի սա Ջոզֆուս Ս. Գէորգ (Մարգիտեան, Տեղագրութիւնը, էջ 251. հմմտ. Մրուանմանաց, Համով Հոտով, էջ 38. Արեւելք, 1901, թ. 4725. Հայրենիք, 1887, թ. 2254 եւ թ. 2255): Ունէր ընդարձակ հող եւ եղած էր ժամանակ մը որբանոց:

29. ՄՊԻՏԱԿ ԿԱՄ ՄԻՎՏԿՈՒ ՎԱՆՔԸ

Արտոս լեւոն մօտ եւ Աթանանց զիւղին քովերը, Չարահան Ս. Նշանի հանդէպ, կը հիմնուի Սպիտակ վանքը⁵¹: Այսպէս կոչուած վանն զի՝ հողն սպիտակ, քարն սպիտակ, զմբէթն ու կաթնուղիկէն սպիտակ են եւ եկեղեցին ու շուրջը դանուած բոլոր շէնքերն ալ սպիտակ, սրբատաշ քարերով շինուած են (Մրուանմանաց, Համով Հոտով, էջ 51 եւ Շէրենց, Սրբավայրեր, էջ 109): Բայց անոր Սպիտակ կոչուելու մասին կայ եւ այս աւանդութիւնը: Լէնկիթիմութեան արշաւանքներու ատեն անոր սեւամորթ զինուորներէն մէկը տապարը ձեռքին՝ կ'ուզէ եկեղեցւոյն դուռը խորտակել, «բայց այն ինչ կ'իջեցնէ ստալին հարուածը ահա անմիջապէս իր սեւ գոյնը ձեռքակի կը փոխուի եւ այս սրտաճառու այն վանքը կ'ազատէ աւրուելէն եւ ի յիշատակ ասոր այն օրէն ի վեր Սպիտակ վանք կը կոչուի» (Բիւզանդիոն, 1900, թ. 1199): «Թէեւ փոքրիկ եւ սահմանափակ է Սիվակու վանքը, բայց քաղցրիկ եւ վայելաչապէս շինուած քով լրիկ ու մնջիկ կ'ծկտել է մի կողմ. ճամբից եւ բանաւոր անբան ճամբորդներին մէկուսի փոքրիկ միարանութիւնով ապրել է երկար տարիներով...: Սիվակու վանքը գոյութիւն ունեցել է Արժրուսի թագաւորաց եւ իշխանաց ժամանակից. այդ տեղ թագուած են այն տոհմի նշանաւոր իշխաններին ուսմանը, նոյնպէս եւ հողեւորականները»⁵² (Շէրենց, Սրբավայրեր, էջ 109. հմմտ. եւ Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 160):

⁵¹ Գարուն այդ լեւոն ստորոտը կանգնած է այս վանուց հայկապ տաճարն այնքան հաստատուն եւ այնքան ամուր, որ մի գարու մօտ տարիներէ հետէ ամայի մնալով հանդերձ ցարդ իր պարսպապատով մէկ տեղ կը մնայ անխախտ» (Նոյն, Հայրենիք, 1887, թ. 2254. հմմտ. եւ 2255):

⁵² Հմմտ. Բերգաձորի եւ Բարի Ս. Աստուածածնի վանքերը:

⁵³ Շինուած Աղթամարէն վերջ: Այս վանքին տաճարին ձախտիցմը կայ սա արձանագրութիւնը՝ «ԹՎ. ԿՅ. Քրիստոս, զՏէր եղիտէ որ առիթ կղև այս մարդկանն... արտոս դատիս (?) գնա սրբոց խորանաց արձանի արտոսէ եւ զՀայոց եւ զՎրաց գաստուածասէր մարդկան որ արկեամբ կատարեաց զճանայ... ամէն Տէր Աստուած» (Բիւզ., 1900, թ. 1199):

Հ. Մարգիտեան ալ կ'աւանդէ թէ է՝ «Շինեալ ի Գարկայ արքայէ ի վերայ բարձր բլրի, որ է նոյնպէս ի կողաց Արտօսի (Տեղագրութիւն, էջ 255): Մարգիտեանի նկարագրութեան համեմատ արքայաշէն գործ մը է՝ «Ոչ իր շինուածքով եւ ոչ ալ յարակից շէնքերով նշանակելի բան մը ունի: Հնութիւն բնաւ. միակ զմբէթն արդէն քայքայուած»⁵³ (Արեւելք, 1901, թ. 4752):

Ժէ. դարուն գրուած յիշատակարանի մը համեմատ Սպիտակ վանքիս Ս. Աստուածածնի եկեղեցւոյն նուէրներ կ'ընեն Մելքիւսիւթ կաթնուղիկոս եւ Իշխան-դոմի մեծ մելքը՝ Թաղուոր (հմմտ. Լալայեանց, էջ 1014—1016):

Ունեցած է բաւական շատ հանդ ու անդաստան, որոնք մեծ մասով Արտօսի հարաւային երկու լանջերուն վրայ տարածուած են⁵⁴: 1875ին կը կողոպտուի եւ Բարսեղ քահանան կը վերաւորուի (Փունջ, 1875, թ. 1033): Աղթամարայ գերիշխանութեան ներքեւ էր: 1884ին վանահայրն էր Ստեփան Տէվիկանց: Չուրկ էր ներքին եւ արտաքին բարեկարգութենէ (Հայրենիք, 1887, թ. 2262 եւ Արեւելք, 1884, թ. 214. հմմտ. եւ Գեղունի, էջ 70. Արեւելք, 1887, թ. 979):

Վանքս անմահացած է 1915ին իր շուրջը մղուած կոիւով (հմմտ. Ասպարէզ, 1939, թ. 1871):

30. Ս. ՎԱՐԳԱՆԻ ՎԱՆՔԸ

«Կայ յարեւելից կուսէ Նարեկայ ուխտին շինեալ ի բարձրադիր գրութեան հանդէպ ծովուն Աղթամարայ» (Նօտարք, էջ 133, ծն. 2. հմմտ. եւ էջ 46, ծն. 1) կամ ի «սահմանակցութեան Նարեկայ ուխտին եւ Փշափանք եւ Տշող զիւղօրէից» (անդ, էջ 197, ծն. 1), Պատական կամ Բատական զիւղի աւրեւմուտքը (Ազգր. Հանդ., 1911, էջ 43), Չէլիպ զիւղի քովերը (Անդ, 1913, էջ 34), «ի Գաւաշ գեղջ» (Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 388):

⁵³ Սպիտակ վանքի եկեղեցւոյն վարի մասը անտաշ եւ վերի մասը տաշուած քարով շինուած է: Արտաւորուած շատ պարզ է, իսկ ներքուստ օժտուած է կամարներով, որոնց վրայ կը հանդէ զմբէթը կանաճեւ կաթնուղիկով: Ունի զոյգ խորան: Երկարութիւնն է 10 մետր, լայնութիւնը 8 մետր եւ բարձրութիւնը 10 մետր (Ազգր. Հանդ., 1911, էջ 47):

⁵⁴ Այս վանքին եւ ուրիշ շատ մը վանքերու հասցիներու պատկերը տրուած է «Աղատամար»-ի մէջ 1909, թ. 132 եւ 1910, էջ 369:

Կոչուած է նմանապէս Ապափանք կամ Ապափանք⁵⁵ (Բիւզանդիոն, 1900, թ. 1027): Հին վանքը ըլլալ կ'երեւայ եւ լոկ անուանովը յիշուած Վարդան Աշխարհազրի մօտ (Saint-Martin, Բ., էջ 428): Ժամանակ մը տեսած է նորոգութիւն եւ ապա աւերակ մնացած (Ազգր. Հանդ., 1911, էջ 43):

Ս. Վարդանի⁵⁶ եւ Վարդանանց անուանով ծանօթ են ինձ հետեւեալ յիշատակարանները, որոնք ամէնքն ալ այս տեղ նիւթ եղած վանքը չեմ կարծեր որ ակնարկեն:

ա. 1303ին գրուած ձեռագրի մը մէջ Մկրտիչ կը մաղթէ՝ «Թողցէ զբազում մեղս եւ սխալանս զԳրիգոր արեղային զճնողի եւ գեղբայր նորա եւ զամենայն արեան մերձաւորաց եւ ծնողաց նոցա սպասաւորաց սուրբ ուխտին Վարդանանց սրբոց» (Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 64):

բ) «Եւ արդ ես մեղքեցեալ Ծերուն սոսկ անուամբ արեղայս, որ ի նարդեան ժամանակիս Հէրպետ կոչիմ... հոչակաւոր մենաստանիս՝ Սուրբ Վարդանայ զօրավարիս. եւ հարազատ եղբայրն իմ Թումայ վաճառական, որ ստացողն է Սուրբ Աւետարանիս, տուաք զսա ընծայ եւ նուէր յանուանի գեօղս Գաւաշ սուրբ տաճարաց Ամենափրկչին եւ սուրբ Կիրակոսին...: Այլ եւ զպատուական կրօնաւորքս յիշեցէք ի Քրիստոս զհարքս մեր եւ գեղբարքս, որք են միարանք եւ սպասաւորք հրեշտակարանակ սուրբ ուխտիս, Սուրբ Վարդանայ զօրավարիս... Ծերունի հայրս մեր պատուական Տէր Թումայ... եւ ի սորա առաջնորդութիւնս շատ արդիւնք յաւելցաւ վանացն... Մկրտիչ մահտեսին եւ Ստեփանոս սրբահոգին, Բարսեղ եւ Վարդան, եւ ես Ծերունս արուպ քան զամենեսեան. եւ սպասաւոր սոցին: Արդ՝ ի հէրպետութեան Տէր Թումային. մեր ամենեցուն օգնականութեամբս, եւ կամօք աստուածասէր տանուտէրացս՝ որք կան այժմ կենդանի. Մանկասարենց Թումայ, եւ Հիւս Կիրակոսն՝ Սոջայ Ստեփաննոսն եւ Յիթիկայ Կիրակոս, եւ Ռէս Աղուպչէն... սոցա եւ մեր ամենեցուն կամօքս, եւ օգնականութեամբս, եւ տրօք եւ ողորմութեամբ քրիստոնէից, եւ յորդոր-


1732-71

մամբ Սուրբ եւ Աստուածարան վարդապետացն Յակոբայ եւ Յովհաննէս Պուտրկեցւոյ. շինեցաւ ի հիմանց Սուրբ Վարդան զօրավարի դուրբեթաձեւ եւ երկնաման տաճարն ի հէրպետութեան վանիցն Թումայ արեղային, եւ ի դանութեան դարայ Յուսոֆին, եւ յամիրապետութեան Ոստան քաղաքի Ամիր էղդինն, եւ որդւոյն իւրոյ Մէլիք Մահմատին, կտրվաւ (հաստատեցաւ) եւ նոյն իսկ Թումայ վանից հօր ձեռօք Նաջրադնի վեցբու հողն արտ՝ ամիրայ մլքաթղթովն եւ նշանովն. Սուրբ Վարդանայ Մուլք գնուաւ. եւ Կաթողիկոսենց արտերն եւ Պէշքենի դրախտն... շինեցաւ եւ ձիթահանք ի Գաւաշ գեղաւս...» (Նօտարք, էջ 45—46 եւ Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 388—390):

Յաջորդ յիշատակարանը Հ. Ակինեանի Յիշատակարանաց Հաւաքումէն է⁵⁷:

«Փառք... (824ր) ուստի եւ տեսալ զսորայն անձառ փրկազորութեան խորհուրդ աստուածասէր ողին Մուրատայ եւ ստացաւ զսուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իւրոյ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողացն Անպէտին եւ Թալրէզին. եւ եղբարցն Եվատին եւ Ստեփանոսին, Ղարիպազին եւ Գաւաշ մելիէքին եւ կենակցին Հայրիթաթունին եւ աներօջն Աստուածատրին...: Եւ արդ ես... կատարեցի զսուրբ Աւետարանս զրով եւ ոսկով ի սոյոց եւ յընտիր աւրինակէ... յիշեսլէք... զանպիտան զրէչս զԱստուածատուր արեղայ եւ զճնողքն իմ զԱտոմ եւ զՇաքար Խաթունն եւ զհարազատ եղբարն իմ զԹումարէկ եւ զՅոհաննէս... նաեւ զվարդապետն իմ զՅակոբ որ բազում աշխատեցաւ ի վրայ իմ եւ ուսոց ինձ զՍաղմոս եւ զչարական զտետր, զգծագրութիւն եւ զամենայն բարձրութիւն... Այլ եւ զրեցաւ սուրբ աւետարանս ի յանապատիս սուրբ Վարդանայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնինս եւ սուրբ Վարդանայ զօրավարիս, ի հէրպետութեան Թումայի, ի հայրապետութեան տեսուն Դաւթի: Եւ ի թուականութեանս Հայոց Պիլ. ձեռամբ Աստուածատուր արեղայի... բազում աշխատանաբ կատարեցի զցանկ եւ բառն յայն աւետարանէն որ ի Սիս էր գրած: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՈստան քաղաքի քահանայքս, զկենդանիքս եւ զհանգուցեալսն.

⁵⁷ Պիլ Թուին 1416ին կը գրուի բոլորապէս Մալտոյ ի յերկիրս Ռչաունեաց յանապատ սուրբ Վարդան (Թովճեան, Յուց. հայ. Չեռ. Գաղեան Վրդ. Բ., էջ 55):



գնահանելու քահանայն եւ աւագերէց սուրբ Աստուածածնին եւ զՅովանէս փրկիտօփայն զԱմիրըուսենց: Եւ զԳորգ փրկիտօփայն. եւ զՍտեփաննոս քահանայն եւ զԱստուածատուր փրկիտօփայն. եւ զԱտոմ փրկիտօփայն. զԾերուն զրազիրն. զՍարգիս քահանայն եւ այլք որ գնացին առ Քրիստոս: Ձեռք Քրիստոս Աստուած զիւրեանց ձեռագիր յանցանացն: Իսկ զԿենդանիքս՝ զՍտեփաննոս քահանայն որդի Յոհաննէս քահանային, եւ զորդի նորին Յոհաննէս քահանայ: Այլ եւ զաւագերէց սուրբ եկեղեցոյս զաէր Թուճայ. եւ զՅովանէս փրկիտօփայ. զՍտեփաննոս որդի Աստուածատուր փրկիտօփային որ ի վերոյ յիշեցաք. եւ զմիւս Ստեփաննոս որդի Ատոմ քահանային. եւ Ձաքարիս որդի Ստեփաննոս քահանայի. եւ զԹուճայ որդի Ծերունին, զՄկրտիչ, զՍտեփաննոս, զՅովանէս, զՄկրտիչ, զՎարդան...: Ես Մուրատոս որդի Անպէտին տուի զսուրբ Աւետարանս Ոստան քաղաքի կաթողիկէ եկեղեցոյն սուրբ Ստեփաննոսի ընծայ» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2670. Մուրատի մասը առանձին յիշատակագրութիւն է):

դ. Գծագրեցաւ սուրբ Աւետարանս... ի խնդրոյ երկուց հարազատաց Ծերուն արեւապետի սուրբ Վարդանայ Հերպետին... (Նօտարք, էջ 133 ուր եւ ծն. 2):

ե. 1446ին զրուած Յայտաւորքի մը յիշատակարանին մէջ կայ՝ «Յիշեալիք առաջի Քրիստոսի զանարժան եւ զմեղաւոր ծանայս զՍտեփաննոս զրիչ...: Յիշեալիք... զստացող սուրբ զրոցս զիստակրօն եւ զսրբասէր Մկրտիչ կրօնաւորն եւ զեղբայր Յովանէս, զոր ետուն զրել զսուրբ զիրքս... եւ եղին ի դուռն սուրբ Վարդան զօրավարին, որ է յերկիրն Ռչտունեաց հանդէպ զեղին Գաւաշի (հմմտ. Բնաշխ. Բորն., էջ 499) յիշատակ բարի հոգեաց իւրեանց...: Արգ ես... Մկրտիչ անուամբ միայն կրօնաւորս... տուի զսա ընծայ եւ նուէր ի զերահանգ ուխտս որ յանուն սուրբ Վարդան զօրավարին» (Նօտարք, էջ 152) 58:

զ. Սարգիս քահանան աւետարան մը նորոգած կը գնէ՝ «Ի բնիկ ուխտ իւր ի սուրբ Վարդան յիշատակ իւր» (1639ին, Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 782):

58 Նօտարքի հեղինակը կը հրատարակէ 1460ին որդի յիշատակարան մը, որ սակայն զրուած է միայն «Ի զստան սուրբ Վարդանայ» (հմմտ. անդ, էջ 197):

31. ԲԱՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ոստանի մօտ ծովահայեաց վանք մըն է Ս. Աստուածածին Քարի, որ զուցէ նոյն ըլլայ Սպիտակ կամ Սիլվաիու վանքի հետ եւ որ Աթանանց գիւղի մօտ է (հմմտ. անդ), վասն զի կը գրուի Գիր օրհնութեան 59՝ «Ի սուրբ խաչն Աղթամարայ եւ ի Քարի սուրբ Աստուածածնի ի սուրբ տաճարէս... զեղին Աթանանայ եւ ընակչացն նորա մեծին եւ փոքու հրամանաւ Տէր Ձաքարիս Հայոց կաթողիկոսին» (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 314—316):

Վանքիս մէջ 1432ին կ'աւարտի Աւետարան մը՝ «Աւարտեցաւ ի յանապատին, որ Քար կոչի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ առ յոտս Յակոբ հրեշտակալի ձգնաւորի ձեռամբ Սարգիս անպիտան ծառայի. յիշեցէք զՄատթէոս քահանայ... քանզի զաւետարանիս մաղաղատս ինձ ողորմութիւն արար եւ զհոգեւոր հայրն իմ զՅակոբ արեղայն, որ եղև միթարութիւն եւ հոգեւոր ուրախութիւնս յայտ անապատիս... նաև զՅերմիա արեղայն եւ զաէր Ստեփաննոսն, որ զաւրինակն շնորհեաց եւ զմիւս Յակոբն... արեղայն եւ զմանկուք անապատիս զՅովանէս միայնակեացն եւ զՄարտիրոս կրօնաւորն եւ զհայրն իմ Թաղէոս եւ զմայրն իմ էլմա եւ զեղբարքն իմ Բախտիյար, Մարտիրոս, Գրիգոր, Գուլիյար, Արղութա, Բիրթէլ. Թղ. ՊՁԱ» (Հ. Ն. Ակինեան, Հաւաքումն Յիշատ. Երեւան, Թ. 123):

Իսկ 1444ին Քարի Ս. Աստուածածնի 60 մէջ կը գրուի Գանձարան մը, որուն երկար ու կարեւոր յիշատակարանն է՝

«... Եւ արգ զրեցաւ սա (Գանձարան) ի մայրաքաղաքս Ոստան ի դուռն Քարի սուրբ Աստուածածնին, որ է ծովահայեաց ընդ հովան(ե)աւ սորին, եւ սուրբ Ստեփաննոսի Նախավկային եւ սրբոյն Սարգոսի զաւրավարին, որ սակաւ հետի: Եւ արգ զրեցաւ սա ի Թուականիս Հայոց ՊՂԳ (1444) ի հայրապետութեան Տեանն Տեանն Ձաքարիայի...: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զսպասաւոր եւ զերախտաւորք սուրբ ուխտիս զիմաստուն եւ զհանձարեղ եւ զմեծահամբաւ բարունին զՅովանէս, եւ Ստեփաննոս հէրպետ եւ զԱստուածատուր վարդապետն եւ զԱրքահան

59 Գիր օրհնութեան կը արուի, որովհետեւ Ս. Աստուածածնի արտ մը «մուրք» կ'ըլլուի (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 314—316):
60 1439ին կ'աւարտի ճաշոց մը սյուսեղ (Նօտարք, էջ 119) եւ 1440ին Գանձարան մը (անդ, էջ 121):

սրբանեալ կրօնաւոր որ առաջնորդ եղև զրոցս որ եւ յայտ ամի փոխեցաւ ի Քրիստոս եւ զՄկրտիչ մահապախն որ մահանուն կոչիւրենց կոչի եւ զՅովանէս կրօնաւորն եւ զայլ ամենայն հաւատացեալ ննջեցեալքն, որ ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս հանդուցեալ են եւ եղեալ ի սուրբ ուխտս Պարտիկի վանք կոչեցեալ...: Դարձեալ յիշման արժանի արարէք զայժմու սպասաւորք եւ զգործաւորք սուրբ ուխտիս, որ կան ծաղկեալ պէսպէս առաքինութեամբ...: Նախ եւ առաջին զանրիծն հոգով եւ զանարատն մարմնով զՅովանէս վարդապետն եւ զսպասաւոր կան՝ եւ ընտրեալ կրօնաւորն զՄարտիրոս եւ զՍտեփաննոս կրօնաւոր, որ սպասաւոր եղև սուրբ տառիս եւ զսրբանեալ կրօնաւորն որ յայտ ամի ընկալաւ զառաջնորդութիւն սուրբ ուխտիս...: Եւ զընտրեալքն եւ զգովեալքն ի մարդկանէ՝ զսրբանունեղ եպիսկոպոսքն զաէր Սիոն եւ զաէր Յովանէս եւ զՅովանէս եւ զՊետրոս կրօնաւորքն... եւ զհեղահոյի կրօնաւորն զՅովանէս փակակալն եւ զառաքինի կրօնաւորն եւ զԹաղէոս եւ զԹուճա... մահապախ եւ զՊարտիկոս մահապախ... սուրբ եկեղեցեացս եւ զՂաղար... զգործաւոր» (Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Նոր-Բայազիտի, էջ 40—41):

Աւետարան մը 1461ին կը գրուի՝ «յաստուածախնամ քաղաքս Ոստան ընդ հովանեաւ Քարի սուրբ Աստուածածնին եւ սուրբ Ստեփաննոս Նախավկային...» (Նօտարք, էջ 205): Իսկ 1467ին կը գրէ Աւետարան մը Կարապետ քահանայ «Ի մայրաքաղաքիս յիստան ի դուռն սուրբ Աստուածածնին Քարի որ է ծովահայեաց, ընդ հովանեաւ մեծի սուրբ Ստեփաննոս Նախավկային...» (Նօտարք, էջ 231. հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1925, էջ 258):

32—33. ՕԴԷԼ ԵՒ ԳՈՍԳԻ Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԵՐԸ

Փիկանց զիւղի արեւմտակողմը Վանայ ծովի եզերքը կը տեսնուին «Օդէլ վանք» անուն աւերակ զիւղի մը կիսակործան շէնքերը: Այս զիւղի մասին կը պատմեն թէ իր անունն առած է հոս եղած եօթն վանքերէն եւ թէ այս բոլոր վանքերն ալ ժամանակին շէն են եղեր, ինչպէս Գոմքի Ս. Գէորգի վանքը, որ անոր մօտերն է (Հայրենիք, 1887, Թ. 2254—2255, 2231 եւ Արեւելք, 1887, Թ. 952):

ՎԱՆ-ՏՈՍՊԻ ՎԱՆՔԵՐԸ

Վան-Տոսպ զաւառը կը տարածուի Բզնունեաց լճի արեւելեան կողմը սրողաբեր դաշտի վրայ եւ ունի 40 անդղ. մզոն շրջապատ (Մուրճ, 1903, Թ. 6, էջ 30): «Ինչպէս Հաստանի ամէն կողմերում, նոյնպէս եւ Վան-Տոսպ զաւառի սահմանի մէջ Հայոց վանքերը, որոնք Վասպուրականի այս մասում բազմաթիւ են, զրաւում են երկրի ամենալաւ տեղերը՝ հաստատուած լինելով ընդհանրապէս ջրաշատ ձորերի բերան կամ լեռանց լանջերին զիւրին վայրերում» (Անդ, Թ. 8, էջ 34):

1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ Ի ԲԵՐԳԱԿ

Բերգակ անունով քանի մը զիւղեր¹ կան Վասպուրականի մէջ: Տոսպի Բերգակ զիւղին մէջն է Ս. Աստուածածնի վանքը, որ այժմ աւերակ է: Կործանած է Վանի տիրահազակ երկրաշարժին հետեանքով (հմմտ. Առ. Դաւրիժ. Պամ., էջ 492 եւ Արձուի Վասպուրական, 1859, Գ., էջ 63):

2. Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔԸ

Վանի դաշտի հարաւարեւելեան կողմը, քաղքէն զրեթէ մէկ ժամ հեռու, Կոռուպաշ կամ Սուրուպաշ հայարնակ զիւղի մերձ, բլուրի մը զաղաթին կառուցուած է Ս. Սաշի վանքը (Շէրենց, Սրբավայրեր, էջ 46—47, Ազգր. Հանդ., ԻԱ., 1911, էջ 85 եւ Մուրճ, 1903, Թ. 6, էջ 39):

Վանքը կը բաղկանայ եկեղեցիէ մը, մատուռէ մը, զաւելթէ մը եւ քանի մը սենեակներէ: Եկեղեցին 9 մետր երկար, 5½ մետր լայն եւ զրեթէ 12 մետր բարձր է: Անտաշ քարերով շինուած է եւ ստանց սիւնի, միայն թէ ունի երկու հատ բաւական յառաջացած որմնասիւններ, որոնց վրայ կը բոլորուին կիսաբոլոր կամարներ՝ կրելու համար ութանկիւնի եւ փոքրիկ զմբէթը, որ օժտուած է չորս պատուհանով: Կողակը բոլորակ է եւ կամարակապ: Ունի արեւմտեան կողմը դուռ մը եւ երկու նեղիկեկ ու երկնիկեկ պատուհան: Դրան կամարակալ բարին վրայ արձանադրուած է՝

¹ Տարբերունեաց Բերգակ զիւղին մէջ 1298ին եւ 1306ին Յովանայ կը գրէ Երկու աւետարան (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 148—149, Լուծայ, 1903, Թ. 5, էջ 59):